МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«01» փետրվարի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2023 թվականի դեկտեմբերի 29-ին գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

«ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 09.01.2024թ. ժամը 10:00-ը: Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել, ամփոփվել է 10.01.2024թ.

Էլեկտրոնային հակադարձ աճուրդի ավարտին 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում ի հայտ են եկել մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Մասնակցի կողմից ներկայացվել է այլ կազմակերպության ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի Հավելված 1 (Դիմում-հայտարարություն), ներկայացված Հավելված N 1-ը (էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն) էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է եղել Արտաշես Մկրտչյանի կողմից, սակայն առկա չէր լիազորագիր, հայտում բացակայել է Հավելված N 1.3-ը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև), ինչպես նաև 1-ին և 6-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերը լրացված չեն եղել:

Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի հետևանքով գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի

որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, Մասնակցի հայտը 1-ին և 6-րդ չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 6-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, որի մասին հայտարարությունը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, որոշում եմ.

Առաջարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը Մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	Գործու նեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացա կարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմա նագրով նախատես ված պարտա վորությունը, որը հանգեցրել է պատվիրա տուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմա նագիր կնքելու իրավունքից	
«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ	00522502	ՀՀ Ք.Երևան, Երկաթու ղայիններ 4փ 2/6	V			Որոշման ամսաթիվը՝ 01.02.2024թ., Ընթացա կարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/40»

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
գլխավոր մասնագետ Մելինե Սողոյան հեռ. 060 38-00-40, 077 19-80-99